

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Այս պատմությունը թերևս չէր գրվի, եթե չլիներ ԱրմենՏել ընկերության կողմից հայտարարված «Նեռախոսակապը սերունդների կյանքում» խորագրով մրցույթը՝ նվիրված երևանյան հեռախոսակապի մեկդարյա հորելյանին: Նամոզված եմ՝ շապ-շապերի կյանքում առկա են վերոհիշյալ թեմային առնչվող բազում հիշողություններ, գուցե առավել հետաքրքրաշարժ, զավեշտալի կամ ողբերգական... Այնուհանդերձ ցանկանում եմ ձեզ ներկայացնել մի եղելություն, որն անասելի քաղցր հուշեր արթնացրեց հոգումս՝ ինձ մտովի տեղափոխելով գրեթե կես դար ետ՝ դեպի մասնկությանս անհոգ տարիները...

ԿԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՀԵՌԱԽՈՍՆ ԻՆՉ ԿԱՊ ՈՒՆԻ,



ՁՍԵՆ ՍԵԿՆ ԻՐ ԲԱԽՏՆ ՈՒՆԻ



Beeline®

ԵՐԵՎԱՆ-2013



ՀԵՌԱԽՈՄՆ ԻՆՉ ԿԱՊ ՈՒՆԻ, ԱՍԵՆ ՄԵԿՆ ԻՐ ԲԱՄՏՆ ՈՒՆԻ

Վաթսունական թվականների սկզբին ծնողներս ամուսնացան ու տեղափոխվեցին Երևան՝ մշտապես բնակվելու: Նորաստեղծ ընտանիքը սենյակ վարձակալեց Մայիսի 9-ի փողոցում գտնվող տներից մեկում: Տանտիրուհին՝ տիկին Չաբելը, որբևայրի էր, ուստի երեք սենյակները վարձով էր տվել՝ ապրելու միջոց ունենալու համար, իսկ ինքն ամուսնալուծված դստեր և թոռնուհու հետ ընդամենը մի փոքրիկ տարածք էր զբաղեցնում: Տիկինը ծայրաստիճան կասկածամիտ ու տարօրինակ անձնավորություն էր: Նա հետաքրքրասիրությունից դրդված՝ ուշիուշով զննում էր կենվորների թափած աղբը, հետո քթի տակ փնթփնթում. «Սրա՛նց մի տեսեք, վարձը շաբաթներով

ուշացնում են, բայց ինչե՛ր են ուտում-խամում»:

Մի քանի ամիս անց տատս իր կրտսեր որդուն, որը նոր էր վերադարձել զինվորական ծառայությանից, ուղարկում է մայրաքաղաք՝ ուսումը շարունակելու և աշխատելու: Մինչ մորեղբորս քաղաք գալը այրին հրաժարվում էր նոր տնվոր ընդունել, սակայն երբ տեսնում է թիկնեղ ու գրավիչ արտաքինով քեռուս, միտքը փոխում է և նույնիսկ վարձաչափը չի ավելացնում: Հարց կծագի, թե ինչու, շատ պարզ պատճառով. նա ազգականիս դիտում է որպես հարմար փեսացու՝ մտածելով, որ խելքը կուտեն ու կարճ ժամանակից իրենցով կանեն... Դե, գյուղից եկած միամիտ տղա է, իսկ իր աղջիկն էլ այդ հսկայական տան միակ ժառանգորդուհին է:

Մայրս, ով շատ շրջահայաց կին էր, գլխի է ընկնում խորամանկ տիկնոջ մտադրությունների մասին, փորձում է ինչ-որ կերպ կանխել եղբոր և տիրուհու դստեր միջև օր օրի առավել մտերմիկ դարձող հարաբերությունները, սակայն հենց համոզվում է, որ դա սեփական ուժերից վեր է, որոշում է զանգահարել տատիս, որպեսզի նա մի քան մտածի այդ ամենի առաջն առնելու համար:

Տնից չէր կարող պարզ և ազատ խոսել, քանզի հետաքրքրասեր տիկին Ջաբելը քաղաքային հեռախոսագծին երկու հեռախոս էր միացրել: Մեկը տեղադրել էր իր սենյակում, իսկ մյուսը՝ միջանցքում՝ կենվորների համար (դրանից օգտվելը ևս մտնում էր վարձաչափի մեջ, միայն թե չէր թույլատրում առանց իրեն տեղյակ պահելու միջքաղաքային զանգեր կատարել. դա հավելյալ գումար էր պահանջում): Երբ որևէ մեկը մոտենում էր հեռախոսին, նա արդեն կազմ ու պատրաստ սպասում էր, որպեսզի հարևան սենյակից վերցնի լսափողն ու գաղտագողի ականջ դնի ուրիշների խոսակցությանը, իսկ եթե գլխի էին ընկնում ու դժգոհում, պատճառաբանում էր՝ իբր ստուգում է, որ «դուրս» չզանգեն: Այդ իսկ պատճառով մայրիկս պատրաստվում է գնալ փոստատուն՝ նրա հետաքրքրասիրությունից զերծ մնալու նպատակով:

Նախքան ընտանիք կազմելը մայրս որոշ ժամանակ աշխատել էր փոստատանը, հետևաբար նրան քաջ հայտնի էին բոլոր անհարմարությունները, որոնք սպասվում էին այնտեղից հեռաձայնելու դեպքում: Այն տարիներին միջքաղաքային զանգեր կատարելու համար նախապես պետք է

հեռախոսավարուհուն պատվեր տրվեր, նշվեր խոսելիք ընդհատման քանակը, այնուհետև եթե «գլծ լիներ», կմիացնեին:

...Ժամերով փոստատան չոր և անհարմար պատուհանագոգին նստելուց ու սպասելուց հետո վերջապես հնչում է ցանկալի նախադասությունը. «Լուռի պատվիրողին խնդրում ենք անցնել երկրորդ հեռախոսախցիկ»: Մնում էր վերջին փորձությունը հաղթահարել. հիմա էլ պիտի բախտդ բերեր, որ հեռախոսագծի մյուս ծայրից խոսող աշխատակցուհին կարողանար միանալ նշածդ համարին, իսկ դրանից հետո սկսվում էր ամենահետաքրքիր պահը. դու գրուցում էիր հարազատիդ հետ՝ հաստատ համոզված լինելով, որ մի երրորդ անձ ականջները կախ ունկնդրում է ձեր գրույցը՝ ջանալով բաց չթողնել որևիցե մանրուք, իսկ քիչ անց՝ տեղեկացնում. «Երևա՛ն, ձեզ մնացել է երկու ընդհատման քանակ, կապը կընդհատվի առանց զգուշացման»: Դե արի ու նման նյարդային պայմաններում հրատապ ու կարևորագույն հարց քննարկիր:

Վերջապես հաջողվեց...

-Ալո՛, բարև՛ մամ ջան, ո՞նց եք:



-Լա՛վ ենք, բա՛լես, ի՞նչ կա, դո՛ւ ասա, հո բան-
ման չի՞ պատահել:

-Դեռ չի պատահել, բայց կպատահի, եթե տեղ-
ներիցդ չշարժվեք: Ի՞նչ որոշեցիք Մանուկի հար-
ցով, ե՞րբ եք պատրաստվում նրան պսակել:

-Բա՛լա ջան, ի՞նչ ասեմ, հլա դեռ պարզ չի, ին-
չի՞ ես վռագացնում, ի՞նչ կա:

-Ա՛յ մեր, ես չեմ վռագում, իրավիճակն է այդ-
պիսին, քեզ արդեն տեղյակ եմ պահել, մոռացե՞լ
ես: Ինչքան խրատ եմ կարդում, մե՛կ է, տղեղ ինձ
չի լսում, բանի տեղ չի դնում, էլի իր էշն է քշում...

-Լա՛վ, Սաթե՛ն ջան, հասկացա, մի բան կա-
նենք, կարագացնենք:

Նույնիսկ երկուստեք ծածկագրված խոսակ-
ցություն վարելուց հետո էլ հաջորդ օրն ևեթ ողջ
ավանը խոսում էր այն մասին, որ Շողերի պու-
ճուր տղեն քաղաքում մեկին ճարել է, իսկ մեր ու
աղջիկ ամեն կերպ փորձում են նրան ետ պահել
անմիտ քայլերից: Լուրը կայծակնային արագու-
թյամբ Սոնայի ականջովն է ընկնում: Վերջինս
Թաթոսի աղջիկն էր, և տատիկս չափազանց հա-
վանելով նրան՝ սրտանց ուզում էր հարս բերել:

Մեկ շաբաթ չանցած՝ տատս զանգահարում է

մայրաքաղաք և, մոռանալով մորս նախազգուշացումների մասին, որ իրենց գաղտնալսում են, հանգամանքներից նեղսրտած ասում է.

-Աղջի'կս, ախպորտանցդ ու հարսներիդ հետ որոշեցինք Մանուկիս էս գարուն նշանենք Սոնայի հետ, էնպես որ Ջաբելն ու իրա մարդաթող աղջիկը թող չմտածեն, թե տղուս կթխորեն և ուզաներին կհասնեն: Թարսի նման հիմի էլ Թաթոսանք են իրանց թանկացնում, պոչ խաղացնում: Մի օր վերին թաղում Թաթոսին հանդիպեցի, չտենալու տվեց: Ով գիտի՝ ականջներին բան ա հասել...

Հերթական «ստուգումից» հետո տանտիրուհին ու աղջիկը մերոնց հետ թուր ու թվանք դարձան, և ծնողներս ստիպված տեղափոխվեցին:

Ապագա խնամիների հասցեին ասված խոսքերը, ըստ երևույթին, այս անգամ ևս տեղ էին հասցրել, և նրանք խնամիանալուց հրաժարվեցին:

Քեռիս միաժամանակ երկու թեկնածուներից էլ զրկվեց: Նա շատ նեղացած էր թե՛ մորից, թե՛ քրոջից, որ նման խառնաշփոթ էին ստեղծել: Հավաքելով ուսապարկը՝ նա գլուխն առավ ու կոտրված սրտով ճամփա ընկավ Ռուսաստան՝ օտար ափերում որոնելու իր բախտը...



Անցան տարիներ, մեր ընտանիքը բազմանդամ դարձավ: Երևանի ծայրամասում բնակարան ստացանք: Նորաստեղծ թաղամասը գրեթե գուրկ էր հեռախոսակապից, միայն որոշ շենքերի պատերին ամրացված էին ավտոմատ հեռախոսներ:

Հայրս վթարային ծառայության պետ էր, և մեզ կապ հատկացրին: Հարևանները գիշեր ու գօր մեզ հանգիստ չէին տալիս: Ի՞նչ անեինք, հո չէինք մերժելու. հազար ու մի հարցեր էին ծագում նույնիսկ գիշերային ժամերին:

Հայրս մի օր կատակելով մորս ասաց. «Արի Չաբելի պես մենք էլ միջանցքում հեռախոս դնենք, հա՛մ հանգիստ կնստենք, հաց կուտենք, կքնենք, հա՛մ էլ հարևանները ազատ կխոսեն, մեզնից չեն քաշվի»:

Ես էլ դարձել էի մեր շենքի գզիրը. որոշ մարդիկ, չարաշահելով ծնողներիս համեստությունը, մեր հեռախոսահամարը փոխանցել էին իրենց ծանոթներին՝ արտակարգ իրավիճակներում զանգահարելու համար, իսկ ես պարտավոր էի հարկից հարկ կամ մուտքից մուտք վազվզել՝ տեղեկությունը հայտնելու համար: Ինչե՛ր ասես որ չլսե-



ցինք ու չիմացանք, որքա՛ն ուրախությունների ու, ցավոք, դժբախտ դեպքերի մասին իմացանք, մինչև վրա հասավ մեր փրկությունը. թաղամասում վերջապես կառուցվեց ԱՀԿ՝ ողջ բնակչությանն ապահովելով անհրաժեշտ հեռախոսակապով...



...Շողեր տատա առաջվա պես հաճախ էր մեզ հյուր գալիս: Մայրս պատմում էր, որ քեռուս մեկնելուց հետո հեռախոսը դարձել էր նրա աչքի փուշը, ասում էր, թե դրա երեսից է տղեն թողել-գնացել և հրաժարվում էր այլևս օգտվել դրանից:

Տարիներ անց, երբ մորեղբորս սիրտը փափկեց, իր ռուս կնոջ ու դստեր հետ եկավ մեզ տեսության: Բոլորը մոռացան անցյալի տհաճ դեպքերն ու խաղաղվեցին: Այդուհետև մոր և որդու կապի միակ միջոցը դարձավ հեռախոսը. տատիկս տառաճանաչ չէր, հիշյալ դեպքից հետո էլ ուրիշներին չէր վստահում, որ իր փոխարեն նամակ գրեն. աչքը տեսածից էր վախեցել: Այլևս չէր փնթփնթում հեռախոսի կողքով անցնելիս, իսկ շաբաթվա վերջում տղայի հեռախոսազանգին էր սպասում, ականջը ձայնի պահած՝ սարքի կողքից հեռու չէր գնում:

Մի օր, երբ անհամբերությամբ հերթական զանգին էր սպասում, որոշեցի հոգու հետ խաղալ՝ ասելով. «Տա'տ, հեռախոսը չի աշխատում»: Միայն տեսնեիք, թե ինչպես հուզվեց, իրար խառնվեց:

Չարաճճի արարքիս համար, իհարկե, մի լավ թուր ու մուր կերա մորս կողմից, որ հիմարաբար խեղճ կնոջն անհանգստություն էի պատճառել:

Ահա և վերջ... Պատմությունը, որը ծնունդ էր առել մինչ լույս աշխարհ գալս, շարունակվեց իմ մասնակցությամբ ու գրվեց մի շնչով... Վաղեմի հիշողություններն ինձ սուզեցին մանկությանս օվկիանոսի մաքրամաքուր ջրերի մեջ, և ես դեռ կվայելեմ անցած-գնացած օրերի անհուն բերկրանքը, բայց արդեն առանց ձեզ...

23.09.13.



Կ. Ս. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
ԷԼ. ՓՈՍՏ՝ karinemkrtumyan@rambler.ru

**ՀԵՌԱԽՈՍՆ ԻՆՉ ԿԱՊ ՈՒՆԻ,
ԱՄԵՆ ՄԵԿՆ ԻՐ ԲԱԽՏՆ ՈՒՆԻ**

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԳԻՐ

ԵՎ ՍՐԲԱԳՐԻՉ՝

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՄՈՒՏ-ԲԱԳՐՈՂ ԵՎ

ՆԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՂ՝

ԿԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ



**ՉԱՓՍԸ՝ 84X60, 1/16:
ԾԱՎԱԼԸ՝ 0, 875 ՏՊ. ՄԱՄՈՒԷ:**